Ազգ
Azg
armenian daily
23 ՀՈՒԼԻՍ 2002 ԵՐԵՔՇԱԲԹԻ 136 (2581)

# Ռուսաստանը կտրականապես դեմ է Իրանի ընդգրկմանը «չարիքի առանցքում»

ԹԵՀՐԱՆ, 22 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանը եւ Իրանը լիակատար փոխըմբռնում ունեն Աֆղանստանի իրադրության եւ նրա զարգացման հեռանկարների գնահատականներում, հաղորդում է «Նովոստի» գործակալությունը: Այս մասին կիրակի օրը ռուս լրագրողներին հայտարարել է Ռուսաստանի արտաքին գործերի առաջին փոխնախարար Վյաչեսլավ Տրուբնիկովը, որն այցով գտնվում է Թեհրանում: Ըստ նրա, Իրանի մայրաքաղաքում կայացած ռուս-իրանական կոնսուլտացիաներում ուշադրության կենտրոնում են եղել Աֆղանստանի կայունության եւ անվտանգության ապահովման, թմրադեղերի անօրինական շրջանառության դեմ պայքարի եւ երկրի տնտեսության մեջ լուրջ ֆինանսական ներդրումների անհրաժեշտության հարցերը: Ռուսական ԱԳՆ առաջին փոխղեկավարը հայտարարել է, որ «Ռուսաստանը կտրականապես դեմ է Իրանի ներգրավմանը «չարիքի առանցքում», քանի որ Իսլամական Հանրապետությունը գլոբալ հակաահաբեկչական կոալիցիայի ակտիվ մասնակից է եւ, դրանից բացի, «շատ մեծ դրական ավանդ է մուծել Աֆղանստանի հարցով Բոննի համաժողովի եւ լոյա ջիրգայի գումարման գործում»:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ԹԵՄԱՆ

# Կոռուպցիայի վերացման նախապայմանը

## *Հայաստանի աքիլլեսյան զարշապարը*

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակին նվիրված խորաթափանց հրապարակումներ, ավաղ, այնքան էլ շատ չեն հանդիպում: Այս առումով հաճելի բացառություններից էր մեր երկրում Միջազգային արժույթային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Կարոիս Իրադյանի «Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակը եւ հետագա խնդիրները» հոդվածը («Ազգ», 19 հուլիսի), ուր բանիմաց տնտեսագետի սթափ հայացքով կատարված դառն ու հաճախ դաժան դիտարկումները, մատը մեր իրականության ցավոտ խնդիրների վրա դնելու հեղինակի անաչառ կեցվածքը նրա սկսած խոսակցությունը շարունակելու ցանկություն առաջացրին:

Իր վերլուծության մեջ պրն Իրադյանը, տնտեսագիտորեն բացահայտելով երկրի շոշափելի տնտեսական աճի պայմաններում բնակչության լայն զանգվածների կենսամակարդակի վրա այդ իրական աճի թողած գրեթե զրոյական ազդեցության պարադոքսը, դրա պատճառներից մեկը համարում է կոռուպցիան:

Տես ➧ էջ 3

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# Սնանկացումների պատմության մեջ մեծագույնը՝ WorldCom

## *Կատարյալ անվստահություն ամերիկյան շուկաներում*




Երեկ պաշտոնապես հայտարարվեց, որ Մ. Նահանգների 2-րդ մեծագույն հեռահաղորդակցական ընկերությունը՝ WorldCom-ը, սնանկացած է: Այս մասին մանրամասնորեն անդրադարձել ենք մեր ներկա համարի 5-րդ էջում: Այստեղ պարզապես նշենք, որ 107 միլիարդ դոլար գնահատվող ընկերությունն ունի 41 միլիարդ դոլարի պարտք եւ դժվար թե այլեւս ներդնողներ գտնի այդ պարտքերը գնելու համար: Երեկ հայտարարվեց ընկերության գործադիր նոր տնօրենի պաշտոնում Ջոն Սիջմորի նշանակման մասին, որը պետք է փորձի իրականացնել սնանկացման գործընթացը: Մտահոգիչ է նաեւ ընկերության 85 հազար աշխատողների վիճակը, որոնք աշխատանքից ազատվելու են բնականաբար:

Մյուս կողմից, խուճապային տրամադրություններ են Նյու Յորքի, հետեւաբար նաեւ աշխարհի գլխավոր սակարաններում: Բանն այն է, որ ներդնողները բոլորովին կորցրել են վստահությունը սակարանների բոլոր ցուցանիշների նկատմամբ, գտնելով, որ, ինչպես պատահեց WorldCom-ի, դրանից առաջ Enron-ի եւ կորպորատիվ մյուս ընկերությունների պարագայում, արժեթղթերի շուկաների տվյալներն ամբողջությամբ կեղծ են: Մ. Նահանգների պարագայում այս օրերին ներդնողների միակ վստահելի ապաստանը համարվում է կալվածային շուկան: Տների եւ հողատարածքների գները զգալիորեն ավելացել են այժմ:

# Գրանցվեց ԼՂՀ նախագահի չորրորդ թեկնածուն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 22 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 22-ին ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցեց ԼՂՀ նախագահի չորրորդ թեկնածուին՝ Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության նախագահ Ալբերտ Ղազարյանին: Հուլիսի 23-ից Արցախում սկսվում է նախագահի թեկնածուների նախընտրական քարոզարշավը, որը կտեւի մինչեւ օգոստոսի 9-ի ժամը 24:00-ը: Նշենք, որ Ա. Ղազարյանն անհասկանալի պատճառներով չէր ներկայացել ԿԸՀ ուրբաթ օրվա նիստին, որի ժամանակ ԼՂՀ նախագահի թեկնածուներ են գրանցվել հանրապետության գործող նախագահ Արկադի Ղուկասյանը, Արցախի խորհրդարանի նախկին նախագահ (1996-97 թթ.) Արթուր Թովմասյանը եւ «Միասնություն» հասարակական քաղաքական կազմակերպության նախագահ Գրիգորի Աֆանասյանը:

# Ռուսաստանի հարավում կառուցվում են հայկական եկեղեցիներ

ԿՐԱՍՆՈԴԱՐ, 22 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի հարավային թեմում եկեղեցաշինարարությունը ծաղկում եւ ընդլայնվում է»,- հուլիսի 22-ի մամլո ասուլիսում հայտարարել է Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի Հարավի թեմի առաջնորդ Մովսես եպիսկոպոս Մովսեսյանը:

Աշնանը կօծվի Կուբանի Սլավյանսկ (Կրասնոդարի երկրամաս) քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցին, փոքր-ինչ ավելի ուշ՝ հոկտեմբերին, կօծվի Պյատիգորսկի եկեղեցին (Ստավրոպոլի երկրամաս): Մոտավորապես այդ նույն ժամանակ կօծվի Մայկոպի եկեղեցին (Ադըղեի Հանրապետություն), իսկ տարեվերջին՝ Կուբանի Տուապսեի շրջանի Տենգինկա ավանի եկեղեցին:

Ինչպես գրում է Ռուսաստանի Հարավի «Երկրամաս» թերթը, շինարարական աշխատանքներ են կատարվում նաեւ Ստավրոպոլ քաղաքում եւ Դաղստանում, որտեղ հայկական եկեղեցի է կառուցվում Ղզլար քաղաքում, իսկ Դերբենդում սկսվել է պատմական հայկական եկեղեցու վերականգնումը, որի հիմքը դրվել է դեռեւս 4-րդ դարում: Այս տարվա աշնանը կօծվի Սոչիի հայկական եկեղեցու շինարարության համար նախատեսված հողատարածքը, եւ կսկսվի նոր եկեղեցու շինարարությունը Բուդյոննովսկում (Ստավրոպոլի երկրամաս): Այս տարի կսկսվի նաեւ թեմի վարչական շենքի շինարարությունը Կրասնոդարում:

# Վ. Հարությունյանը զրկվել է գեներալ-լեյտենանտի կոչումից

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես տեղեկացանք ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, նկատի ունենալով բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչումն ու պատիվն արատավորող վարքագիծը եւ ղեկավարվելով «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով, նախագահ Ռոբերտ Քոչարյանն այսօր հրամանագիր է ստորագրել Վաղարշակ Վառնազի Հարությունյանին գեներալ-լեյտենանտի զինվորական կոչումից զրկելու մասին:

# ԽՍՀՄ-ում ապաստանած ԿՀՎ գործակալը մահացել է Մոսկվայում

ՄՈՍԿՎԱ, 22 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մոսկվայում, 50 տարեկան հասակում, մահացավ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության նախկին աշխատակից Էդվարդ Լի Հովարդը, որը ԽՍՀՄ էր փախել 1985 թվականին: Որքան հայտնի է, Հովարդը Խորհրդային Միության կողմն անցած ԿՀՎ առաջին աշխատակիցն է: Ինչպես «Վաշինգտոն փոստին» հայտնել է նախկին լրտեսի մի ծանոթը, որը ցանկացել է անհայտ մնալ, Հովարդը ընկել է ամառանոցի սանդղամուտքից եւ վիզը ջարդել:

Հովարդը ԿՀՎ է ընդունվել 1981 թվականին: Նրան սկսել են պատրաստել աշխատելու մոսկովյան ռեզիդենտուրայում, ուր նա պետք է ճանապարհվեր 1983 թվականին կնոջ Մերիի հետ, որը նույնպես աշխատում էր ԿՀՎ-ում: Սակայն մեկնելու նախօրեին Հովարդը տապալել է ստի դետեկտորով փորձարկումը: Սկսվում է հետաքննություն, որի ընթացքում պարզվում է, որ Հովարդը խմում է, ինչպես նաեւ ձեռքը մաքուր չէ: ԿՀՎ-ն ճիշտ է համարում ազատվել այդպիսի աշխատակցից, սակայն նրան չի թողնում բախտի քմահաճույքին, այլ օգնում են աշխատանքի տեղավորվել Նյու Մեքսիկոյի նահանգի վարչակազմում: Հովարդը, դրամական դժվարությունների պատճառով, թե վիրավորված ԿՀՎ-ից, Վիեննայում 1984 թվականին կապվում է, որքան հայտնի է, խորհրդային հետախույզների հետ, երբ այնտեղ կնոջ հետ հանգստանում էր, եւ իբր նրանց է փոխանցում գաղտնիքներ, որոնք իմացել է Մոսկվայում աշխատել պատրաստվելու ընթացքում:

ԵԳԻՊՏՈՍ

# Ակնհայտ նվաճումների հիսուն տարի

## *1952 թ., հուլիսի 23*

***Հուլիսյան շրջադարձային հեղափոխության հոբելյանական՝ 50-րդ տարեդարձի առթիվ ստորեւ որոշ կրճատումներով ներկայացնում ենք ՀՀ-ում Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեսպան ԲԱՔԸՐԻ ՌՈՒՇԴԻ ԷԼ ԱՄՄԱՐԻԻ խոսքն այդ կարեւորագույն իրադարձության նշանակության եւ ձեռքբերումների մասին:***



Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաք

Հիսուն տարի անց, 1952 թ. հուլիսի 23-ի պատմական իրադարձությունը շարունակում է մնալ ինչպես մարդկության պատմության մեջ տարածաշրջանային եւ միջազգային առումներով կարեւոր թվականներից մեկը, այնպես էլ Եգիպտոսի պատմության մեջ արմատական փոփոխությունների շրջադարձային տարեթիվ: Հեղափոխությունն իրականացավ Եգիպտոսի զինված ուժերի ջանքերով՝ անվեհեր զավակ Գամալ Աբդել Նասերի առաջնորդությամբ: Նրանք տոգորված էին գաղութարարների, միահեծան իշխանությունների եւ իրենց դարն ապրած քաղաքական կուսակցությունների անտարբերության հետեւանքով պառակտման եւ կործանման եզրին կանգնած երկիրը փրկելու եւ հասարակ ժողովրդի ոտնահարված իրավունքները վերականգնելու վեհ նպատակներով: Այդ պատճառով էլ ժողովրդի բոլոր խավերը հուլիսի 23-ի առավոտյան հետեւեցին զինվորականներին եւ աջակցեցին հեղափոխությանը՝ իրականություն դարձնելու անկախ հայրենիք եւ արժանապատիվ ապագա կերտելու իրենց վաղեմի երազանքը:

Այժմ, կես դար անց, կարելի է միանշանակ մատնանշել այն նվաճումներն ու բարեփոխումները, որոնք տեղի են ունեցել Եգիպտոսի, հատկապես ներքաղաքական, արտաքին քաղաքականության եւ սոցիալ-տնտեսական ոլորտներում:

Տես ➧ էջ 4

*Ազգ, Առավոտ, Գինն, Իրավունք,*
*Հայկական Ժամանակ, Հայոց Աշխարհ,*
*Голос Армении, Деловой Экспресс,*
*Новое Время, Республика Армения*

# BIG PRESS

թերթերի գովազդային խումբ

ՀԱՅԿԱԿԱՆ 10 ԹԵՐԹԵՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ **54000** ՏՊԱՔԱՆԱԿ






# BIG press

newspaper advertising group

թերթերի գովազդային խումբ

Tel.: +3742 52 29 61

E-mail: bigadvertisement@yahoo.com



**Высококвалифицированный врач-косметолог проводит:**

- ✓ Лечение облысения (экстрактом плаценты)
- ✓ Массаж лица (+ маска) курс 10 дней - 12000 др.
- ✓ Эпиляция - 2500 др. в час
- ✓ Чистка кожи лица (пилинг) - 1500 др.

Лечение ногтей, заболеваний кожи, шелушение и другие косметологические услуги.

**телефон: 48-81-78 (после 18.00)**



**Стоматологические и косметологические услуги**

**"Здоровье ваших зубов - наша забота"**

- ✓ Художественная реставрация зубов.
- ✓ Профилактика и лечение молочных и постоянных зубов (с обезболиванием).
- ✓ Лечение заболеваний слизистой оболочки полости рта с использованием терапевтических, хирургических и ортопедических методов.
- ✓ Протезирование гибкими микропротезами.

Врач-стоматолог - Саркисян Диана Владимировна

Телефон: 26-61-83, (09) 42-35-31



# APST

Հայաստանում համաշխարհային մի շարք հանրահայտ ֆիրմաների միակ ներկայացուցիչ «APST» ընկերությունը առաջարկում է անգլիական, գերմանական, ֆրանսիական, իտալական, ճապոնական, ինդոնեզական օֆսեթ, պիտակային, կավճապատ, պատճենահանման A-4 չափի որակյալ *թղթերի, ստվարաթղթերի, տպագրական ներկերի եւ նյութերի լայն տեսականի:*
Աննախադեպ ցածր գներ, վճարման եւ զեղչերի ճկուն համակարգ:

*Մեր հասցեն երեւան 375051, Նաիրի Զարյան 24*
*Հեռախոս՝ 25-11-98*



**«INTER DIAGNOSTIKA»**

Медицинские телеконсультации с ведущими медицинскими центрами *России и Германии*

- ✓ Диагностика, консультации и лечение *в офисе и на дому*
- ✓ Страховое медицинское обслуживание

Тел.: 288 533, 288 959, (09) 415 123
Адрес: Ереван 44, ул. П. Севака 5.



# Приглашаем на работу

**Высококвалифицированных электронщиков**

Работа сдельная. Обращаться по адресу Туманяна 6, "МЕДИТЕК"

**тел: 560110**



# ProMedia

THE PROFESSIONAL MEDIA PROGRAM ARMENIA

18/2 Bagramian Ave.,
Yerevan 375019, Armenia
Tel: 3741 58 14 89; Fax: 3741 58 16 04
E-mail: promedia@arminco.com

Բաղրամյանի պ. 18/2
Երևան 375019, Հայաստան
Հեռ. 3741 58 14 89; Ֆաքս 3741 58 16 04
էլ. փոստ promedia@arminco.com

Հրավիրում ենք հայաստանյան թերթերի ուշադրությունը

*IREX/ProMedia Armenia-ն* հիշեցնում է, որ թերթերի ինտերնետային տարբերակի ստեղծման և զարգացման ինչպես նաև համակարգչային տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման համար հայտարարված դրամաշնորհների մրցույթի մասնակիցները պետք է իրենց գործնական առաջարկները և լրացրած հայտերը ներկայացնեն ոչ ուշ քան ս.թ. հուլիսի 25-ը, ժամը 17:00:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված լրատվական կազմակերպությունները, որոնք հաստատուն տեղ ունեն հայաստանյան թերթերի շուկայում:

Ընտրության չափանիշները՝

- նախագծի հստակությունը և հիմնավորվածությունը
- ակնկալվող արդյունքները թերթի տնտեսական անկախության տեսանկյունից
- նախագծի կայունությունը և ազդեցության տևականությունը

Հայտերի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել **IREX/ProMedia Armenia** գրասենյակ հետևյալ հասցեով՝ **Երևան, 375019, Բաղրամյան 18/2:**
Հեռ. 58-14-89, 54-31-94

**Հայաստանում *IREX/ProMedia* ծրագրի ֆինանսավորումը իրականացնում է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը (USAID)**



*Ձեր գովազդի չափը մեր անկախության «չափն» է, այլապես մի դժգոհեք մամուլի ոչ անկախ լինելուց:*

"BIG-PRESS" – это широкая дорога в бизнес.

*Նման գովազդային ընկերություններ գործում են եվրոպայում մեկ տասնյակ տարուց ավել և բավական արդյունավետ:*

*Գովազդատուն վստահում է նրանց և գովազդների ծավալը աճում է օրեցօր:*

"BIG-PRESS" – это выразитель интересов деловых кругов Армении и стран СНГ.

*Մեր գործարարներին հիշեցնենք, որ տպագիր մամուլում գովազդ տեղադրելը ոչ միայն Ձեր գործի ուղղակի հաջողության հիմքն է, այլ նաև Ձեզ ճանաչելու և վստահելու, մեկ խոսքով Ձեր ԻՄԻՋԻ:*

"BIG-PRESS" – это единственная возможность публикации сразу в десяти газетах.

*Ողջունում ենք թերթերի «ԲԻԳ-ՊՐԵՍ» գովազդային խմբի ստեղծումը:*

"BIG-PRESS" – это реальная возможность быть на слуху у потребителя.

*Ցանկանում ենք արդյունավետ աշխատանք ի շահ գովազդատուների և գործարարության:*

*Բարի մուտք «ԲԻԳ-ՊՐԵՍ»...*

# Սկանվորդ


1


2

- … Ֆրեյնդլիխ
- Նյուտոն, Ֆարադեյ
- Խելագարներից Լոռեցին
- Լիրիկական արիա
- Փողոցային «պաստառ»
- Թիբեռնակերպ հույն դիցուհի
- Նուրբ, թավշե կաշի
- Վայրի բողկ
- Նորմաններին ռուսական անունը
- Չնդիկ «բարեհաճ» աստված
- «Վարսահարդար» քամի
- Մեկ ձիով սայլակ
- Մարգախոտ
- Ֆրոնդայի ակտիվիստներից
- Զուքակի «նմանակը»
- Նախապան կամ …
- Ուկրաինական սեյմ
- Քաղաքառողջարան Ղրիմում
- Վարկ է վերցրել, պետք է տա
- «Ականջօղ» միրգ
- Ամերիկյան «չլիկդաստա»
- Փայտաշեն լողացող «գորգ»
- «Աման» որեւէ պարանքի համար
- Բույնովի «ֆինանսական երգը»
- «Կամ աղն է …, կամ մաղը»
- Իրիս ծաղիկը Հայաստանում
- Չունվարի «հոռոմեացի անվանառուն»
- Փայտահատի «գիշերվա երազը»
- Իժերի ընտանիքի օձ
- Ոչխար խոյ, ուլտ …
- Յյուրանոցային «պերճախուց»
- Չին հունական «ռադան»
- Սոչի, Գագրա, …
- Լանգետի «ծեծիչ»
- «Մկրատ …, մտրակ տամ»
- «Պատարագագիր» եկմայլյանը
- «Արտակի» երգահան հայրը
- Լեռնային աշ «երակը»


3

- Նույն ռոնաքարը
- Թեւավոր խոսքերի ժողովածու
- Աֆրիկա, Լուանդա
- Որոշված չափ, հարկ, տուրք
- «Ռազմահունական» սանրվածք
- Առագաստանավ, շոգենավ, …
- Եւ օդանավի, եւ քննական
- Ոչ ուղտ է, ոչ այծ
- Ծաղրի հականիշը
- Չիրակացագվող երազանք
- Այլ կերպ կերակրափող
- Մոնղոլիդ …
- Շտիրլիցը հայրենիքում
- Շորի ծվեն
- Պատի «սփրված մակիաժ»
- Ծովագնաց Մարկոն
- Միտածին միկրոբ
- «Բուրգաքաղաք» եգիպտոսում
- Վանի բազավորություն
- Դատարան Աթենքում
- Լույսի «ձեզատիվը»
- «Չուղիք», խայանացի նկարիչ
- Շաբաթօրյակ, ծառերի «ցանք»
- «Լակոնիկ» սատանա
- Երինջը մեկ տարի առաջ
- Բելլինսգաուզենի ուղեկիցը
- Էլեկտրոնիկ, «պալոճուր» մասնիկ
- «Երկու ռոյալ», հաղորդավար
- Մածունի «հիդրիդ»
- Եւ բռնակ, եւ ականջ
- Ավազը քարից զտողը
- Քաջ Նազարի «ակամա ծին»
- Տան վերին կիսահարկը
- Զորքային «սիրտը» (ԱՄՆ)
- Աղջնակի առաջին «ընկերուհին»
- Բույսից ստացված հեղուկ
- Կարտելների «ընդհանուր կաքսա»
- Դասի «վերադասը» (կենսաբ.)
- «Կիսամարդատար» ավտոմոբիլ
- Լազուր ափ, Ռիվիերա
- Սովի տարվա «ուտեստ»
- Խոսակցության նախապայման
- Իբսենի հերոսուհիներից
- Առնետի նախընտրած «սենյակը»


4

- Օղու ընտիր հումք
- Տաքեւիկ Հովհաննիսյան
- Մեքսիկացի ատեկ, Պերու …
- Ոճրի եւ պատժի միջանկյալը
- Պողշյան փողոցի «բլուրը»
- «Իմիջը փոխած» ուսումնարան
- «Մոծակային» հիվանդություն
- Չիվանդագին նիհար
- Պայմանագրի տեսակ


5

